ՏՀՍԶ բաժնի հաշվետվությունը

01.09-01.06.2020թթ ժամանակահատվածի համար

Հաշվետու ժամանակահատվածի վերջում մասնաճյուղում առկա է 178 աշխատող համակարգիչ, 15 կիրառությունից հանված համակարգիչ, որոնց վրա աշխատանքներ են տարվում հնարավորինս աշխատանքային վիճակի բերելու կամ դրանց աշխատող սարքերի միջոցով մյուսների խափանումները վերացնելու, պարամետրերը լավացնելու համար: ԵՊՀ ԻՄ-ում ունենք 50 տպող սարք, որոնց մեծ մասն աշխատում է ցանցային, 2 սկաներ, 54 սվիչ, 4 DVR, տեսահսկող սարքեր, ունենք տեսասարքով լսարան 19 հատ, 2 տեսախցիկով համակարգիչ, 3 հեռուստացույց:

Համակարգչային սրահները, տեսասարքով լսարանները կիսամյակների սզբին բերվել են աշխատանքային վիճակի, ընթացքում եղել է հսկողության տակ, տեղադրվել են ծրագրերը: Արագ արձագանքվել է համակարգչային տեխնիկայի հետ կապված բոլոր խնդիրներին:

Տեսահսկման սարքեր են տեղադրվել Կիրառական արվեստի ֆակուկտետի ընդունելության քննությունների անցկացման սենյակում:

Համակարգիչների պարամետրերը լավացնելու նպատակով 2 անգամ ձեռք են բերվել DDR3/4GB օպերատիվ հիշողություններ՝ 20 հատ բնական գիտությունների ֆակուլտետի 2 սրահների համակարգիչների համար, 36 հատ մնացած սրահների, լսարանների և ստորաբաժանումների համակարգիչների համար: Արդյունքում 112 համակարգիչ ունի 4 GB օպերատիվ հիշողություն: Նշեմ, որ փաստացի DDR3/1067 և ավելի օպերատիվ հիշողությամբ բոլոր համակարգիչներն այսօրվա դրությամբ ունեն 4 GB օպերատիվ հիշողություն: Օպերատիվ հիշողությունները տեղադրելուն զուգահեռ համակարգիչների մի մեծ մասը ֆորմատ է արվել և տեղադրվել Windows10, քանի որ Windows7-երն այլևս MicroSoft-ի կողմից չեն թարմացվում:

Տնտեսագիտության և հումանիտար գիտությունների ֆակուլտետների սրահները միավորվել են՝ հիմնականում տնտեսագիտության սրահի համակարգիչների բազայի վրա։ Հումանիտար գիտությունների ֆակուլտետում գտնվող սրահի համակարգիչներով փոխարինվել են բաժինների ցածր պարամետրերով, խափանված համակարգիչները և կատարվել են նոր բաշխումներ, մասնավորապես համակարգիչ է հատկացվել Ֆիզիկայի լաբորատորիային, արխիվին, տնօրենի քարտուղարին։

Բոլոր համակարգիչները միացված են ինտերնետ կապին։

Արվեստի սրահում, հաշվի առնելով կիրառվող ծրագրերի պահանջները, բարձր պարամետրերով համակարգիչներ են հավաքվել՝ ի հաշիվ տեղափոխությունների, 4 նոր համակարգիչ է տեղադրվել։ Տեղադրվել, վերատեղադրվել, թարմացվել և հսկվել են ցանցային աշխատող Nod հակավիրուսային, հաշվապահական, կադրերի բաժնի և ուսումնական վարչության SuperVision ծրագրերը։ ՀԾ ծրագրերն ընդհանրապես պահանջում են Windows10, որը շուտով կավարտենք։

Եթե պարտադրված տարբերակ չի լինում, աշխատում ենք համեմատ աշխատանքներն իրականացնել՝ չխանգարելով գործընթացների և դասապրոցեսի բնականոն ընթացքը, նախապես բաժինների հետ համաձայնեցնելով ժամկետները, աստիճանաբար, հաճախ աշխատանքից հետո։ Խափանումների դեպքում հնարավորինս աշխատում ենք տեղում պարզել պատճառը, որից հետո նոր ուղարկում ենք նորոգման։

Ըստ հրամանի իրականացվել է մասնաճյուղի համակարգչային տեխնիկայի գույքագրումը, հաշվառվել են սարքերի տեղաշարժերը, գրվել համապատասխան զեկուցագրերը, իրականացվել են տպիչ սարքերի սպասարկումը, ցանցային աշխատանքը, սպառվող նյութերի ժամանակին ձեռքբերումը։ Փոխարինվել են՝ քարթրիջ-4, ֆ.թմբուկ-6, թերմոժապաեն-2 անգամ, կատարվել է ներկանյութի 62 լիցքավորում։

2020թ.մարտի 13-ից սկսվել է կորոնավիրուսով պայմանավորված արտակարգ դրությունը: Բոլոր ուսումնական պարապմունքներն անց են կացվել հեռահար՝ ըստ դասացուցակի, ZOOM պլատֆորմի միջոցով: Ստեղծվել է 55 Zoom առկա բոլոր խմբերի և ենթախմբերի համար, որոնք հեռակա ուսուցման դասերի ընթացքում օգտագործվել են զուգահեռ, 3 Zoom ստեղծվել է հեռակա ուսուցման խմբերի համար: Քննաշրջանի անցկացման նպատակով ստեղծվել է 15 կոմերցիոն Zoom Google Cloud Platform-ում ավտոմատ գրառում կատարելու հնարավորությամբ: Zoom-ի հասցեն և գաղտնաբառը էլ. փոստով ուղարկվել են կամկազմակերպիչներին՝ դասախոսներին, հղումները՝ ուսանողներին՝ ըստ խմբերի և դասացուցակի, կամ ամբողջն ուղարկվել է ֆակուլտետներին: Գրվել է Zoom-ից օգտվելու ուղեցույց դասախոսների և ուսանողների համար: Բաժինը հետևել է հեռահար դասապրոցեսների ընթացքին, աջակցել դասախոսներին և ուսանողներին հարմարվելու վիրտուալ միջավայրում, տրամադրել անհատական և խմբային կոնսուլտացիաներ, պարբերաբար ստուգել Zoom-երի աշխատունակությունը, շտկել Zoom-ում խախտված ռեժիմները:

5 համակարգչի աշխատանք կազմակերպվել է հեռահար: Այս ընթացքում կատարվել են հեռահար ծրագրերի թարմացումները, համակարգիչների օպերացիոն համակարգերի և օֆիսների ակտիվացիաները: Հաշվետու ժամանակահատվածում ֆոնային լուծվել են առաջացած խնդիրները, իրականացվել են բաժնի բոլոր գործառույթները:

ՏՀՍԶԲ վարիչ——————— Տ. Խաչատրյան